1349

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարարի
պարտականությունները կատարող՝

Արամ Մեյմարյան

«20» 02 2026թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 020-26

Նախաձեռնող՝ *«ԵՐԵՎԱՆՆԱԽԱԳԻԾ» ՓԲԸ*
ք. Երևան, Բուզանդի փ., 1/3 2

Գործունեությունը՝ *Նուբարաշեն վարչական շրջանի Նուբարաշեն ավան 1/3 հասցեում նախատեսվող «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի հատուկ հսկողության մասնաշենքի կառուցում*
ք. Երևան

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 020-26

«20» փետրվարի **2026թ.**

Երևանի Նուբարաշեն վարչական շրջանի Նուբարաշեն ավան 1/3 հասցեում նախատեսվող «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի հատուկ հսկողության մասնաշենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«ԵՐԵՎԱՆՆԱԽԱԳԻԾ» ՓԲԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթուղթ
Գործունեությունը՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Երևան քաղաք, Նուբարաշեն վարչական շրջան, Նուբարաշեն ավան

Ներածական մաս. Երևանի Նուբարաշեն վարչական շրջանի Նուբարաշեն ավան 1/3 հասցեում նախատեսվում է «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի հատուկ հսկողության մասնաշենքի կառուցման աշխատանքներ:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8)-րդ կետի ա. ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Գործունեության իրականացման համար հիմք են հանդիսացել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման N31012025-01-0148 վկայականը, Երևան համայնքի կողմից 2025թ. նոյեմբերի 13-ին տրված ՈՆԹ-10254-25 ճարտարապետահատակագծային առաջադրանքը:

Հողամասի կադաստրային ծածկագիրն է՝ 01-010-0101-0002, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Նախատեսվող հատուկ հսկողության մասնաշենքի նախագծի համար հիմք են հանդիսացել «ԵՐԵՎԱՆՆԱԽԱԳԻԾ» ՓԲԸ-ի և քաղաքաշինության կոմիտեի միջև 2024թ նոյեմբերի 12-ին կնքված հ.ՀՀՔԿ-ՄԱԽԾՁԲ-24/2 պայմանագիրը և տեխնիկական առաջադրանքը:

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեության ենթակա տարածքը գտնվում է Երևանի Նուբարաշեն վարչական շրջանի Նուբարաշեն ավան 1/3 հասցեում, «ՀՀ ԱՆ հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի տարածքում, հարավ–արևելյան կողմում: Աշխարհագրական տեսակետից տեղամասը գտնվում է Նուբարաշենի բլրաշարի կենտրոնական մասում, սիմետրիկ ձգվածությամբ լեզվականման ջրբաժանի գագաթային մասում:

Գեոմորֆոլոգիական տեսակետից գործունեության ենթակա տարածքը գտնվում է Նուբարաշենի ալյուվիա-կուտակումային սարավանդի սահմաններում, Ողջաբերդ-Նուբարաշենի բլրաշարի հարավ-արևմտյան եզրամասում, ալյուվիա-պրոլյուվիալ լանջերի վրա: Մակերեսի բացարձակ նիշերը տատանվում են 1224.0-1227.0 մմ սահմաններում: Տարածքի մակերեսը հարթ է, աննշան թեքությամբ դեպի հարավ-արևմուտք, ամբողջությամբ սահմանազատված բետոնե և քարե պարիսպներով:

Համաձայն գնահատման հաշվետվության՝ հիդրոերկրաբանական տեսակետից տարածքում մինչև 8.0 մետր խորությամբ գրունտային ջրեր չեն բացահայտվել, դրանք գտնվում են 15.0 մետրից խորը հորիզոններում:

Վտանգավոր ֆիզիկա-երկրաբանական պրոցեսներ և երևույթներ՝ փլուզում, սողանք, կարստ, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ նախատեսվող կառույցի հիմքերի վրա, բացակայում են:

Համաձայն գնահատման հաշվետվության, ինժեներաերկրաբանական ուսումնասիրությունների ընթացքում ստացված տվյալների, գործունեության տարածքը կառուցապատման համար ունի բարենպաստ ինժեներաերկրաբանական և գեոտեխնիկական պայմաններ:

Նախատեսվող գործունեության և հարակից տարածքներում չկան ձևավորված որևէ էկոհամակարգ, պատմության, մշակույթի կամ բնության հուշարձաններ, բնության հատուկ պահպանվող տարածքներ: Տարածքում հողաբուսաշերտ առկա չէ:

Նախատեսվող մասնաշենքը կկառուցվի գործող «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲ ընկերության տարածքի ներսում գոյություն ունեցող հատուկ հսկողության մասնաշենքի տեղում, որն ենթակա է քանդման՝ պարփակող պարսպի հետ միասին: Նոր մասնաշենքի տարածքը նախատեսված է որպես փակ գոտի, պարփակված խուլ, քարե պարիսպով:

Նախատեսող մասնաշենքը կունենա 2 հատվածամաս, որոնք միմյանցից բաժանված կլինեն սեյսմիկ կարանով: Մասնաշենքը կունենա երեք վերգետնյա և մեկ նկուղային հարկ: Նկուղային հարկում կլինեն պահեստային հատված, խմբակային և աշխատանքային թերապիաների համար նախատեսված տարածքներ:

Առաջին հարկի մի հատվածում կլինի նախասրահ, վարչական մաս, հարազատների հետ հանդիպումների գոտի և հիվանդների ընդունման բաժանմունք, իսկ մյուս հատվածում՝ վերականգնողական բաժանմունք: Երկրորդ և երրորդ հարկերում նախատեսվում են հատուկ հսկողության չորս բաժանմունքներ:

Տարածքի մուտքը նախատեսվում է առանձին անցակետով հսկվող երեք ուղիներով՝ պացիենտներ տեղափոխող մեքենաների առանձին մուտք, սպասարկող անձնակազմի անհատական մեքենաների, հրշեջ մեքենաների մուտք և անձնակազմի, այցելուների հետիոտնային մուտք: Նախատեսված է ավտոկայանատեղի՝ սպասարկող և բժշկական անձնակազմի անհատական մեքենաների համար:

Յուրաքանչյուր հատված կունենա կանաչապատ և կահավորված ներքին բակ, նախատեսված հիվանդների զբոսանքի համար: Ներքին բակերը մթնոլորտային տեղումներից պաշտպանելու համար ծածկված կլինեն ապակեպատ գմբեթներով: Մասնաշենքը կունենա չորս աստիճանավանդակներ, երկու զույգ վերելակներ, որոնք կապահովեն հենաշարժային խնդիրներով մարդկանց, բժշկական սայլակներով և պադգարակներով պացիենտների ազատ տեղաշարժը:

Ներքին բակերում կնախատեսվեն մեկական մետաղական աստիճաններ, որոնք հնարավորություն կստեղծեն բոլոր հինգ բաժանմունքների համար օգտվելու հանգստի գոտիներից: Բոլոր չորս աստիճանավանդակներով ելք կլինեն դեպի տանիք՝ տեխնիկական սպասարկումներ իրականացնելու համար:

ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

Մասնաշենքի տանիք նախատեսվում է հարթ և կազմակերպված ջրահեռացումով:

«ՀԱՊԱԿ» ՓԲ ընկերությանը պատկանող հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 7.02808 հա (70280 քմ): Նշված տարածքից մասնաշենքի կառուցապատման համար առանձնացված է 0.8895 հա (8895 քմ) մակերեսով հատված: Հիմնական հողատարածքի մնացորդային մասը կազմում է 61385 քմ (70 280 քմ–8 895 քմ), որտեղ նոր կառուցապատում չի նախատեսվում: Մնացած տարածքներում առկա են հոգեկան առողջության կենտրոնի այլ մասնաշենքեր և դրանց սպասարկող ենթակառուցվածքներ, որոնք շահագործվում են գործող կարգով:

Առանձնացված 8895 քմ տարածքում նախատեսվում է՝

- կառուցապատում՝ 3221.5 քմ (36.2 %),
- կանաչապատում՝ 3228.5 քմ (36.3 %),
- անջրանցիկ մակերեսներ՝ 2445.0 քմ (27.5 %):

Մասնաշենքի շինարարական ընդհանուր մակերեսը կկազմի 10677.5 քմ, որից՝ վերգետնյա հարկեր՝ 7520.5 քմ, ստորգետնյա հարկ՝ 2902.0 քմ, տանիքի տեխնիկական մակերեսներ՝ 255.0 քմ:

Շենքում նախատեսվում է տաք, սառը ջրամատակարարման, կոյուղու և հակահրդեհային ցանցեր:

«Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի հատուկ հսկողության մասնաշենքի էլեկտրամատակարարումը կկատարվի մոտակա ենթակայանից՝ մալուխագծերով:

Նախատեսվող մասնաշենքը կմիացվի գոյություն ունեցող կաթսայատանը, տաք ջրամատակարարումը կիրականացվի գործող կաթսայատանից:

Ներքին ցանցի միջոցով սան.սարքերից կենցաղային կեղտաջրերը ինքնահոս կհավաքվեն և կհեռացվեն դեպի կոյուղու բակային ցանց, որը միացված կլինի համայնքային կոյուղատարին:

Բանվորական և ԻՏԱ անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքների և տարածքի ջրցանի ջրամատակարարումը կիրականացվի «ՀԱՊԱԿ» ՓԲ ընկերությանը պատկանող ներտարածքային ջրագծից և գոյություն ունեցող երկու ջրամբարներից:

Նախատեսվող շինարարական աշխատանքների ընթացքում հողային հանույթի զանգվածը կկազմի 25488 խմ, որից 3814 խմ կպահեստավորվի և շինարարական աշխատանքներից հետո կօգտագործվի հետլիցքի և տարածքի բարեկարգման նպատակով, իսկ 21674 խմ կտեղափոխվի համայնքապետարանի կողմից նշված վայր:

Քանդման աշխատանքների և առաջացող շինարարական աղբի հավաքումը, բեռնավորումը և հեռացումը կիրականացվեն համապատասխան մեքենամեխանիզմների կիրառմամբ: Շինարարական աղբի ժամանակավոր պահպանումը նախատեսվում է հատուկ առանձնացված տարածքում: Աղբի ժամանակավոր պահման ընթացքում կկիրառվեն շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները բացառող միջոցառումներ, մասնավորապես՝ տարածքի սահմանափակում, աղբի տեսակավորում (հնարավորության դեպքում), փոշեգոյացման նվազեցում և տարածքի պարբերական մաքրում: Շինարարական աղբի վերջնական հեռացումը և տեղադրումը կիրականացվի համապատասխան թույլտվություն ունեցող կազմակերպությունների կողմից՝ սահմանված աղբավայրեր տեղափոխելու միջոցով:

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում շրջակա միջավայրի բաղադրիչների վրա ազդեցությունները հիմնականում կապված կլինեն փորման, բեռնման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման, բետոնային աշխատանքների հետ: Աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը

կապված կլինեն՝ հիմքերի փորման ընթացքում առաջացող փոշու, շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ դիզելային վառելիքի արտանետումների հետ:

Շինարարության կազմակերպման և շինարարական աշխատանքների ժամանակ նախատեսվում են շրջակա միջավայրի բաղադրիչների (հողային, ջրային ռեսուրսների, մթնոլորտային օդի) պահպանության համար բնապահպանական մի շարք միջոցառումներ, որոնցից են՝

- կառուցապատման ենթակա տարածքի ցանկապատում,
- շինությունների ծածկում անթափանց թաղանթով՝ համապատասխան բարձրությամբ,
- շինարարական աշխատանքների/փոշի առաջացման աշխատանքներ/ ընթացքում, ջրցանի իրականացում,
- շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակի պարբերաբար ստուգում և կարգավորում,
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխում փակ ծածկով մեքենաներով,
- սորուն նյութերի պահեստների ծածկում համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կկանխարգելի փոշու տարածումը,
- վնասակար նյութերի արտադրության, ներմուծման, արտահանման, պահման և օգտագործման վերահսկում՝ բացառելով հավելյալ աղտոտվածության առաջացումը,
- արտանետումների նվազեցման միջոցառումներ, ներառյալ ֆիլտրացիոն, կլանման և այլ տեխնոլոգիական համակարգերի օգտագործում,
- ջրցանի ծավալների այնպիսի հաշվարկվում, որը չի առաջացնի մակերևութային հոսքեր և ջուրը կբավականացնի միայն փոշենստեցման համար,
- շինարարական նյութերի բետոնապատ մակերեսի վրա տեղադրում,
- շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակի ապահովում և այլն:

Շինարարական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ բետոնի խառնուրդը կմատակարարվի բետոնատար ավտոմեքենաներով, մասնագիտացված ընկերության կողմից, պայմանագրային հիմունքներով:

Շինարարության փուլում նախատեսվում է իրականացնել օդի աղտոտվածության գործիքային չափումներ անընդհատ ռեժիմով:

Համաձայն գնահատման հաշվետվության նախատեսվում է իրականացնել կանաչապատման, սիզամարգի հիմնման աշխատանքներ: Կանաչապատ տարածքների, այգու հատվածի ոռոգման ցանցի սնուցումը իրականացվելու է նախկինում առկա ոռոգման ցանցից:

Գնահատման հաշվետվության համաձայն՝ շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակների (հրդեհի առաջացում, հեղուկ նյութերի արտահոսք, շահագործվող տեխնիկայի հետ վթարներ և այլն), այդ թվում նաև աղմուկի և թրթռումների հնարավոր ազդեցության բացառման, նվազեցման համար ևս նախատեսվում են մի շարք բնապահպանական միջոցառումներ, որոնք նկարագրված են գնահատման հաշվետվության համապատասխան բաժիններում:

Նախատեսված բնապահպանական բոլոր միջոցառումները ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Կառուցապատման աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսված է իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները՝

1. մթնոլորտային օդը աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ երեք ամիսը մեկ անգամ

հաճախականությամբ,

2. փոշենստեցման նպատակով տարածքի ջրցանում տարվա օդի դրական ջերմաստիճանի դեպքում, օրական 2-3 անգամ հաճախականությամբ,
3. օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,
4. աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ անգամ հաճախականությամբ:

Պարճառաբանական մաս. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ հանրային ծանուցումը և լսումներն իրականացվել են Երևանի Նուբարաշեն վարչական շրջանի ղեկավարի նստավայրում: Հանրային լսումների ժամանակ գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Գնահատման հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, կադաստրի կոմիտեից, Երևանի քաղաքապետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից, որոնք հաշվի են առնվել ՇՄԱԳ հաշվետվության լրամշակումում:

Ամփոփելով գնահատման հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ: Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են փորման, բեռնման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման, բետոնային աշխատանքների հետ: Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ:

Փորձաքննական պահանջներ

1. Շինարարության ընթացքում ապահովել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը սահմանված ժամանակահատվածում:
2. Բետոնի տեղափոխումն իրականացնել ՇՄԱԳ հաշվետվությունում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրություն:
3. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում առաջացող շինաղբի և թափոնների հեռացումն ու տեղափոխումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով՝ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:
4. Կառուցապատման աշխատանքներն իրականացնելիս առաջնորդվել Կառավարության 2025 թվականի մայիսի 22-ի N 611-Լ որոշմամբ հաստատված «Մթնոլորտային օդի պահպանության բնագավառում 2025-2030 թվականների համար միջոցառումների»

ծրագրով, ինչպես նաև քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2026 թվականի հունվարի 15-ի N 02-Ն հրամանով սահմանված պահանջներով:

5. Գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների հայտնաբերման դեպքում՝ առաջնորդվել ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի N 781-Ն որոշման պահանջներով: Իրականացնել կենսաբազմազանության պահպանությանն ուղղված միջոցառումներ, նախատեսել կենսաբազմազանության մոնիթորինգ:
6. Հիմք ընդունելով «Կենդանական աշխարհի մասին» օրենքով սահմանված դրույթները՝ գործունեության իրականացման ընթացքում ՀՀ Կարմիր գրքում գրանցված կենդանատեսակների հայտնաբերման դեպքում ձեռնարկել միջոցառումներ՝ կենդանատեսակի և դրա կենսամիջավայրի պահպանության ուղղությամբ:
7. Կանաչապատումն իրականացնել համայնքի հետ համաձայնեցված՝ տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմաններին բնորոշ ծառաթփային բուսականությամբ՝ Կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի N108-Ն որոշման պահանջներին համապատասխան:
8. Կառուցապատման աշխատանքների ընթացքում պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածով սահմանված պահանջները:
9. Աշխատանքների իրականացման ընթացքում առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի պահանջով՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ԵՐԵՎԱՆՆԱԽԱԳԻԾ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված Երևանի Նուբարաշեն վարչական շրջանի Նուբարաշեն ավան 1/3 հասցեում նախատեսվող «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի հատուկ հսկողության մասնաշենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է պետական փորձաքննական դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պարտականությունները կատարող՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
գլխավոր մասնագետ՝ Նելլի Նասիբյան